Արձանագրություն N13

2024 թվականի դեկտեմբերի 20-ին ժամը 14.15-ին կայացած՝ եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի նիստի

Նիստը մեկնարկեց ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանի ողջույնի խոսքով: Վերջինս, շնորհակալություն հայտնելով մասնակիցներին, կարևորել է այս ձևաչափով քննարկումների անցկացման կարևորությունը՝ հարկային և մաքսային ոլորտներում արդյունավետ գործիքակազմերի ներդրման ու գործարար համայնքի համար բարենպաստ պայմանների ստեղծման տեսանկյունից: ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը ներկայացրեց նիստի օրակարգը, մասնավորապես՝ նշելով, որ օրակարգում ներառված են «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանի ներկայացրած հետևյալ հարցերը՝ «Հայաստանի Հանրապետությունում նույնականացման միջոցներով դրոշմավորման ենթակա մի շարք ապրանքների ցանկը և ցանկում ներառված ապրանքների՝ նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և ՀՀ ՊԵԿ նախագահի 10.12.2024թ. «Հայաստանի հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը հաստատելու մասին» N 326-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» N1606-Ն հրամանը:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը նշեց, որ օրակարգում նշված հարցերը քննարկման առարկա դարձնելու պատճառն այն է, որ դրանք վերաբերում են հարկ վճարողներին, որոնց վրա լրացուցիչ պարտավորություններ են դրվում: Վերջինս նշեց, որ հարկ վճարողների համար կարևոր նախագծերն անհրաժեշտ է նախ քննարկել խորհրդում, այնուհետև տեղադրել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում: Միաժամանակ, նշվեց, որ շատ

դեպքերում հանրային քննարկման դրված նախագծերի վերաբերյալ ներկայացված դիտողություններն ու առաջարկություններն անտեսվում են, մշակող մարմնի կողմից մեկնաբանություն չի նշվում և կարծում է, որ կայքը կորցրել է իր իմաստն ու ավելի շատ տեղեկատվական բնույթ է կրում: Անդրադառնալով օրակարգում ներառված նախագծին՝ Փ. Թադևոսյանը նշեց, որ նախ ցանկալի կլիներ ներկայացվեր նախագծի հիմնական նպատակը, որից հետո դրա շուրջ ծավալվեր քննարկումը: Միաժամանակ, նշեց, որ չնայած հիմնավորման մեջ նշված է, որ նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է պետական բյուջեի ծախսերի կրճատում, սակայն հարց է առաջանում, թե որն է նախագծի ընդունման հիմնական նպատակը. ինչու է ընդլայնվում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման ցանկը, ինչ ակնկալիքներ կան, ինչու է բյուջեի ծախսը դրվում հարկ վճարողների վրա և ինչքանով է վերաբերելի ՊԵԿ-ին:

Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ նախքան նշված հարցերին անդրադառնալը, ճիշտ կլինի ներկայացնել նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի ներդրման նախապատմությունը:

ՊԵԿ նախագահի տեղակալի ժ.պ. Ա. Մանուկյանը ներկայացրեց նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի ներդրման նախապատմությունը: Մասնավորապես՝ նշեց, որ անդրադարձ կատարելով պատմականորեն ձևավորված պրակտիկային՝ ՀՀ օրենսդրությամբ ժամանակին ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների՝ ծխախոտի և ալկոհոլային խմիչքների համար սահմանվել են ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման կարգավորումներ, հետագայում ՀՀ հարկային օրենսգրքով սահմանվել են նաև օրենսգրքով սահմանված ապրանքների ցանկի համար դրոշմապիտակներով դրոշմավորման կարգավորումներ: Նշվեց նաև, որ հետագայում Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է ԵԱՏՄ շրջանակներում ընդունված համաձայնագրերին և այդ համաձայնագրերի շրջանակներում իրականացվել են և իրականացվում են նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման ընդհանուր կարգավորումներ, որպեսզի նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքները լինեն փոխճանաչելի բոլոր անդամ պետություններում: Միաժամանակ, նշվեց, որ յուրաքանչյուր անդամ պետություն իրավասություն ունի իր ազգային օրենսդրությամբ ներդնել դրոշմավորման կանոններ, եթե մյուս պետություններում

որոշակի ժամանակահատվածում չեն համաձայնվում ընդհանուր տարածքում ներդնել: Աստիճանաբար սկսվել է ներդրվել ապրանքների՝ նույնականացման միջոցներով դրոշմավորման համակարգը, որը սկզբնական շրջանում իրականացվել է փորձնական ծրագրերի շրջանակներում, այնուհետև ներդրվել է նույն ապրանքների պարտադիր դրոշմավորումը: Միաժամանակ, բացի պետական բյուջեի ծախսերի կրճատումից, հարկ է նշել, որ նոր համակարգը հնարավորություն է տալիս ինչպես հարկ վճարողների, այնպես էլ հարկային մարմնի համար իրականացնել ընթացակարգերի պարզեցում, վարչարարության հեշտացում, քանի որ ստացվում է, որ յուրաքանչյուր ապրանք դառնում է տեսանելի և յուրաքանչյուր ապրանքի մասով հնարավոր է իրականացնել հսկողություն: Վարչարարության և հարկ վճարողների կողմից հարկերի ճիշտ հաշվարկման ու ժամանակին վճարման տեսանկյունից այն առաջադեմ կառուցակարգ է, քան թե գործող դրոշմապիտակներով դրոշմավորման համակարգը, քանի որ վերջինս յուրաքանչյուր ապրանքի մասով հսկողության մեխանիզմ և հետագծելիություն չի ապահովում: Նշվեց նաև, որ բազմաթիվ ոլորտային հանդիպումներ են եղել հարկ վճարողների հետ և ընթացիկ առաջացած խնդիրներին շատ արագ տրվել են համապատասխան լուծումներ: Համակարգի կատարելագործման արդյունքում էլ հնարավոր է դարձել համակարգը կիրառել մնացած ապրանքների մասով: Ինչ վերաբերում է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղեդրված նախագծերի վերաբերյալ ներկայացված կարծիքների անտեսմանը, վերջինս հայտնեց, որ կանոնակարգի համաձայն յուրաքանչյուր անձ կարող է կայքում տեղադրված նախագծերի վերաբերյալ ներկայացնել իր կարծիքը և որոշակի ժամանակահատվածում դրա վերաբերյալ կայքում տեղադրվում է համապատասխան մեկնաբանություն, որն էլ մնացած փաստաթղթերի հետ միասին ներկայացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմ և նիստերի ժամանակ ուսումնասիրվում են նաև ներկայացված կարծիքները:

ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ հանդիպման հիմնական նպատակն այն է, որ տեսանելի են նոր համակարգի ներդրման հետ որոշակի խնդիրներ, նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման ցանկն ընդլայնվում է, իրականացվել են փորձնական ծրագրեր, առկա է վիճակագրություն, սակայն դա բավարար չէ առկա իրավիճակի վերաբերյալ պատկերացում կազմելու համար, ուստի կարևոր է նման

ձևաչափով քննարկման կազմակերպումը, որի ընթացքում կներկայացվի, թե ինչ իրավիճակում է գտնվում համակարգը, ինչ տեխնիկական ու կիրառական խնդիրներ են ի հայտ եկել համակարգն օգտագործողների մոտ: Նշվեց նաև, որ նախագծի առանցքային թիրախը պետական բյուջեի ծախսերի կրճատումը չէ, ուղղակի համակարգի ներդրումը հանգեցնում է նաև դրան: Ավելին, նոր համակարգն ունի մի շարք առավելություններ ապրանքների հետագծելիության, ստվերի նվազեցման հետ կապված և այլն: Վերջինս առաջարկեց, որպեսզի ներկայացվեն փորձնական ծրագրի ընթացքում նոր համակարգի կիրառության ընթացքում առաջացած խնդիրները և դրա շուրջ ծավալվի քննարկումը:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը ներկայացրեց հետևյալ հարցերը՝ ինչու է դրոշմապիտակը փոխարինվում հսկիչ նշանով, արդյոք դրոշմավորման համակարգը չէր լուծում այն խնդիրները, որը պետք է լուծի նոր համակարգը, որն է նպատակը նոր համակարգի ներդրման, ինչու է ծախսը դրվում հարկ վճարողի վրա, արդյոք համապատասխան քննարկումներ իրականացվել են փոքր արտադրողների հետ, արդյոք գնահատվել է, թե ծախսերն ինչ ազդեցություն ունեն փոքր տնտեսվարողների վրա: Վերջինիս ի պատասխան, ապրանքների դրոշմավորման ազգային օպերատոր հանդիսացող՝ «Հեռանկարային տեխնոլոգիաների զարգացման կենտրոն-Արմենիա» ՍՊԸ տնօրեն Հ. Հովհաննիսյանը նախ նշեց նոր համակարգի առավելությունները և այն, որ բազմաթիվ քննարկումներ են եղել ինչպես խոշոր տնտեսվարողների, այնպես էլ փոքր տնտեսվարողների հետ: Բացի այդ տեղի են ունեցել վեբինարներ փոքր տնտեսվարողների համար համակարգի ներդրման նախապատրաստական աշխատանքներին և կիրառմանը ծանոթացնելու նպատակով: Միաժամանակ, վերջինս նշեց, որ նոր համակարգը ոչ միայն թվային դրոշմավորման մասին է, այլ այն կարելի է դիտարկել որպես ենթակառուցվածք, որը տալիս է, օրինակ՝ հոսքագծերի ավտոմատացման, ապրանքների հաշվառման և հետագծելիության ու մի շարք այլ հնարավորություններ:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանի բարձրացրած հարցերի հետ կապված՝ ՊԵԿ նախագահի առաջին տեղակալի ժ.պ. Հ. Սահակյանն էլ նշեց, որ նախ նոր համակարգի կիրառմամբ ԵԱՏՄ շրջանակներում ավելի հեշտ փոխանակում կլինի: Միաժամանակ, համակարգն ապահովում է վիրտուալ մակարդակում

ավելի վերահսկելի տարբերակ: Վերջինս նշեց նաև, որ ավելի հստակ խնդիրները ներկայացվելու դեպքում, հնարավոր կլինի լուծել դրանք: Նշվեց նաև, որ անհրաժեշտ է տարանջատել ծախսը հարկ վճարողի վրա դրվելու հարցը մյուս հարցերից և նախ քննարկել համակարգի կիրառության հետ կապված խնդիրները: Վերջինս նշեց նաև, որ համակարգը լրացուցիչ հնարավորություն է տալիս ապրանքների ամբողջ շղթային հետևելու վիրտուալ մակարդակում և հարկ վճարողի կյանքում դրոշմապիտակ կփակցվի, թե հսկիչ նշան, էական փոփոխություն չի կատարվելու:

«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ անդամ Տ. Քեյանը համեմատական անցկացրեց դրոշմապիտակներով դրոշմավորման և նույնականացման միջոցներով դրոշմավորման համակարգերի միջև և նշեց, որ նոր համակարգի կիրառումը ենթադրում է որոշակի լրացուցիչ գործողությունների իրականացում: Վերջինս նշեց նաև, որ չնայած նոր համակարգի դեպքում մակնշումն իրականացվում է շատ արագ, սակայն նոր համակարգի կիրառությունը բարդացնում է հարկ վճարողի կյանքը՝ առաջացնելով խնդիրներ, օրինակ՝ ծրագրային խնդիրները, ծածկագրի պատվիրման հետ կապված խնդիրներ, ֆայլի բեռնման ժամանակ խնդիրների առաջացումը, ծրագրի միջոցով ստացվող հաշվետվության բարդ լինելը, նույնականացման նշաններով դրոշմավորված ժամկետանց ապրանքների վերադարձի հետ կապված խնդիրը, հանրային սննդի և նմանատիպ ոլորտներում ապրանքների վրա առկա նույնականացման միջոցների սկանավորման հետ կապված հարցերը, ոչ դիտավորությամբ կրկնակի նույնականացման միջոցների կիրառության կամ տեխնիկական խնդիրների պատճառով վարչարարության իրականացման հետ կապված խնդիրներ: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի առաջին տեղակալի ժ.պ. Հ. Սահակյանը նշեց, որ հավանաբար նշված խնդիրները փորձնական ծրագրի ընթացքում առաջացած խնդիրներ են, որոնցից շատերն արդեն լուծված են: Նշվեց նաև, որ հանրային սննդի և նմանատիպ դեպքերի համար նախատեսվել է օրենսդրական կարգավորում՝ ՀԴՄ տեղեկատվական կտրոն, որով նախատեսվում է, որ սկանավորումն կարող է իրականացվել ցանկացած փուլում, իսկ ինչ վերաբերում է դրոշմավորված ապրանքի վերադարձի հարցին, ապա հարկ է նշել, որ ՀԴՄ-ով վերադարձն արդեն նախատեսված է: Տեխնիկական խնդիրների պատճառով կամ կրկնակի հսկիչ նշանի կիրառության դեպքում պատասխանատվության հարցի հետ

կապված նշվեց, որ տուգանքը կիրառվում է հսկիչ գնմամբ խախտում հայտնաբերվելու դեպքում:

«Ֆիլիպ Մորրիս» ընկերության ներկայացուցիչ Վ. Պողոսյանը, անդրադառնալով համակարգի կիրառության հետ կապված հնչեցված խնդիրներին, նշեց, որ շատ խնդիրներ տեխնիկական բնույթ են կրում, որոնց իրենք ևս առնչվել են համակարգի կիրառության ընթացքում և դրանք շատ արագ լուծվել են ազգային օպերատորի համապատասխան աշխատակիցների միջոցով: Վերջինս նշեց նաև համակարգի առավելությունները, մասնավորապես՝ նշեց հետագծելիության ապահովումը, ապրանքի շարժի տեղափոխության յուրաքանչյուր փուլում ֆիքսումը, զեղծարարության և մաքսանենգության դեմ պայքարելու հնարավորությունը: Առաջարկեց նաև, որպեսզի ԵՄ-ի հետ ևս լինի փոխճանաչելիություն, քանի որ տեղական արտադրողների համար կլինի առավելություն նշված գործիքի կիրառումը: Անդրադառնալով այն հարցին, թե ինչու է ծախսը դրվում հարկ վճարողի վրա, վերջինս նշեց, որ ուսումնասիրելով մի շարք երկրների փորձը, պարզվել է, որ բազմաթիվ երկրներում, մասնավորապես՝ Եվրամիության երկրներում ևս կիրառվում է նշված համակարգը և ծախսն էլ դրված է հարկ վճարողների վրա:

«Ռոքարմ» ՍՊԸ ներկայացուցիչ Դ. Մխիթարյանն էլ անդրադարձավ ջրարտադրության ոլորտում համակարգի կիրառության իրենց փորձին՝ նշելով համակարգի առավելությունները, մասնավորապես՝ հատային հաշվառման հնարավորությունը, ինչպես նաև այն, որ Data Matrix ծածկագրի տեղադրումը թույլ է տալիս արդյունավետորեն պայքարել զեղծարարության դեմ, պաշտպանում է օրինական բիզնեսին և սպառողներին:

ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանը ազգային օպերատորի ներկայացուցչին հարցրեց, թե արդյոք հնչեցված խնդիրները կառավարելի են, տնտեսվարողները ինչքանով են պատրաստ համակարգի կիրառությանը և արդյոք պատրաստ են պատշաճ ձևով սպասարկել տնտեսվարողների մեծ քանակին: Վերջինիս ի պատասխան, ազգային օպերատորի ներկայացուցիչը հայտնեց, որ համակարգը պատրաստ է, ավելին տեխնիկական բնույթի շատ հարցեր գույքագրվել են և ստացել համապատասխան լուծումներ: Նշվեց նաև, որ համակարգին ծանոթանալը տևում է մոտ մեկ երկու օր և հիմնական խնդիրը տնտեսավարողներին իրազեկելու և դաշտ բերելու հետ է կապված:

Վերջինս նշեց, որ սկզբնական շրջանում տնտեսվարողների մեծ հոսքի պատճառով վերջիններիս համակարգին ծանոթացնելու հետ կապված որոշակի ռիսկեր են տեսնում, քանի որ շատ տնտեսվարողներ ցանկություն չեն հայտնել նախապես ծանոթանալու համակարգին, քանի դեռ պարտադիր պահանջ առկա չէ: Միաժամանակ նշվեց, որ տնտեսվարողների շրջանում պարբերաբար կազմակերպվում են ուսուցողական վեբինարներ՝ իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով և շատ խնդիրներ լուծվում են 24/7 ռեժիմով՝ ապահովելով համակարգի անխափան աշխատանքը:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանն առաջարկեց, որ որոշումն ուժի մեջ մտնի 2025թ. հունվարի 1-ից, սակայն կիրառությունը տարածվի երեք կամ վեց ամիս հետո: Միաժամանակ, նշեց, որ անհրաժեշտ է լուծել ծախսի հարցը և հարցրեց, թե ինչու է մեկ ազգային օպերատոր: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալի ժ.պ. Ա. Մանուկյանը նշեց, որ թեև նախատեսվում է, որ որոշումն ուժի մեջ է մտնելու 2025թ. հունվարի 1-ից, սակայն դա դեռ չի նշանակում, որ այդ ժամկետից սկսած պետք դրոշմավորումն իրականացվի նույնականացման նշաններով: Ավելին, այն տնտեսավարողներն, որոնք ունեն ստացած դրոշմապիտակներ շարունակելու են դրոշմապիտակներով դրոշմավորումն, այսինքն՝ ստացվում է որ ոչ թե 2025թ. հունվարի 1-ից է պարտադիր դառնում, այլ այն ժամկետից սկսած, երբ տնտեսվարող սուբյեկտի մոտ վերջանում է առկա դրոշմապիտակների քանակը: Ինչ վերաբերում է մեկ ազգային օպերատոր նախատեսված լինելու հարցին, նշվեց, որ դա ԵԱՏՄ պահանջ է և ազգային օպերատորն ընտրվել է, ի տարբերություն մյուս երկրների, որտեղ օպերատորը նշանակվել է:

«Համագործակցության նոր ուղի- կիրթ գործարար» ՈՒԳԿԶԿ ՀԿ ներկայացուցիչ Ա. Արամյանն առաջարկեց որոշումն ուժի մեջ մտնելուց հետո սկզբնական շրջանում նվազագույնը վեց ամիս վարչարարություն չիրականացնել:

ՊԵԿ նախագահի տեղակալի ժ.պ. Ռ. Գևորգյանը նշեց, որ շատ բարդ է ներկա փուլում քննարկել գնի հետ կապված հարցը, քանի որ համակարգը ներդրման նախնական փուլում է ու կատարելագործվում է և հնարավոր է հետագայում սակագնի փոփոխություն կատարվի: Շատ դեպքերում տնտեսվարողներիի համար վճարման դիմաց ծառայության

ստացումը արդարացված է, որովհետև համակարգի ներդրմամբ մի շարք պրոցեսներ օպտիմալացվում են և տնտեսվարողն առավելություն է ստանում:

Ամփոփելով ՊԵԿ նախագահ Է. Հակոբյանն ընդգծեց, որ նախագծի վերաբերյալ խորհրդի անդամների կողմից ներկայացված բոլոր մտահոգություններն առավել խորքային կուսումնասիրվեն և կքննարկվեն արդյունավետ լուծումները:

Հաջորդիվ անդրադարձ կատարվեց օրակարգի 2-րդ հարցին, որի վերաբերյալ «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը հարցրեց, թե ինչի համար է անհրաժեշտ տեղեկատվության ներկայացումը, որն ուղիղ կապ չունի հարկերի վճարման հետ, քանի որ հարկ վճարողը ռեսուրս է ծախսում տեղեկատվության տրամադրման համար, իսկ հարկային մարմինը խնայում է իր ռեսուրսը և դա ինչ է տալու ՊԵԿ-ին: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ Լ. Հարությունյանը նշեց, որ յուրաքանչյուր հաշվարկ, որ ներկայացվում է հարկային մարմին կապված է հարկերի վճարման կամ հարկերի հաշվարկման ճշտության հետ և դրանից բացի այլ տեղեկատվություն չի ներկայացվում: Գործող կարգավորումների համաձայն ներկայումս հարկ վճարողները եռամսյակային ներկայացնում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկը և անձնավորված տեղեկություններ տարեկան կտրվածքով: Կատարված փոփոխության արդյունքում մեկ փաստաթղթի միջոցով է ներկայացվում և հաշվարկը, և տեղեկությունները և հետագայում տարեկան կտրվածքով տեղեկություններ ներկայացնելու անհրաժեշտություն չկա: Մյուս կողմից, կատարված փոփոխությունը հարկային մարմնին հնարավորություն է տալիս տեղեկատվությունը օգտագործել իր վերլուծական գործիքներում:

ՊԵԿ նախագահի առաջին տեղակալի ժ.պ. Հ. Սահակյանը հարցրեց, թե ինչն է բարդացնում հարկ վճարողների կյանքը, քանի որ փոփոխության արդյունքում ներկայացվում է մեկ հաշվարկ և այլևս տարեկան տեղեկություն չի ներկայացվում, ինչպես որ ներկայացվում էր մինչև փոփոխությունը: Ընդ որում, հիմնական տարբերությունը ուղղակի որոշ երկրների մասով ավելի բացված տեղեկության ներկայացումն է: Նշվեց նաև, որ նորմալ հաշվառման վարման դեպքում համապատասխան հաշվապահական

ծրագրում որոշակի փոփոխություն կատարելու պարագայում հնարավոր է ինքնաշխատ ստանալ տեղեկությունը: Միաժամանակ, նշվեց, որ կատարված փոփոխությունը հարկային մարմնին տալիս է վերլուծության, տեղեկատվության փոխանակման, ռիսկերի գնահատման հնարավորություն:

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ նախագահի տեղակալ Ա. Հարությունյանը հարց բարձրացրեց հաշվարկում եկամտի վճարման ամսաթվերի ներառման անհրաժեշտության հետ կապված: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ Լ. Հարութունյանը նշեց, որ տեղեկատվության փոխանակման միջազգային պայմանագրերի շրջանակներում ամբողջական փոխանակման համար պարտադիր է վճարման ամսաթվերի վերաբերյալ տեղեկատվությունը: Նշվեց նաև, որ ամսվա ընթացքում բազմակի վճարումների դեպքում ամսաթվերի ներառման հարցի հետ կապված առկա է խնդիր, որը լրացուցիչ կքննարկվի:

Նիստի վերջում, օրակարգին համապատասխան՝ խորհրդի անդամների կողմից ներկայացվեցին հարկային և մաքսային վարչարարությանն առնչվող հարցեր:

«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ անդամ Տ. Քեյանը հարց բարձրացրեց վերահսկվող գործարքների մասին ծանուցման տուգանքի չափի մեղման հետ կապված: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի առաջին տեղակալի ժ.պ. Հ. Սահակյանը նշեց, որ տուգանքի նման չափը սահմանված է շատ երկրներում, որպեսզի տրանս-ֆերային գնագոյացման համակարգը կայանա: Նշվեց նաև, որ միգուցե հետագայում հնարավոր է քննարկվի տուգանքի չափի մեղման հարցը: ՊԵԿ նախագահի տեղակալի ժ.պ. Ռ. Գևորգյանը նշեց, որ ներկայումս քննարկվում է վերահսկող գործարքների մասով հարկ վճարողներին նախապես ծանուցելու ընթացակարգը:

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանը հարցրեց, թե 2023 թվականի համար հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցողներից որքան է ներկայացրել հայտարարագիր: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալի ժ.պ. Ռ. Գևորգյանը նշեց, որ իրական շահառուների ճշտության առումով որոշակի վերապահում ունեն և ներկայացվել է մոտ 60 հազար հայտարարագիր: Նշվեց նաև, որ սկզբնական ներդրման տարում խիստ վարչարարություն իրականացնելուց

հարկային մարմինը ձեռնպահ է մնացել: Փ. Թադևոսյանը հարցրեց նաև, թե ինչու պետք է իրական շահառուները ներկայացնեն հայտարարագիր, եթե եկամուտ չեն ստացել: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահի տեղակալի ժ.պ. Ռ. Գևորգյանը նշեց, որ տվյալ հարցը հարկային քաղաքականության հարց է և անհրաժեշտ է քննարկել քաղաքականություն մշակող մարմնի հետ:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

X

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Signed by: HAKOBYAN EDUARD 3001910811

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ